2019, ՀՈԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 20 (544)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԴԵՊԻ ՆՈՐԱՆՈՐ ԱՐԾԱԼՈՒՅՆԵՐ

(Վեհափառ Հայրապետի օծման եւ գահակալության 20-ամյակի առիթով)

ԱՆԿԵՂԾ սրտով շնորհավորում եմ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի Աթոռին գահակալելու 20-ամյակի կապակցությամբ: Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակը լավագույն առիթ է, որ պետք է համարձակ եւ ազնվորեն արտահայտենք մեր երախտիքն այն ամենի համար, որ կատարվել է այս տարիներին:

Աստվածային Սերը բարոյապես պարտադրում է մեզ տեսնել, գնահատել եւ արժեւորել Վեհափառ Հայրապետի կատարած գործերը, այլեւ արդար վկայություն տալ Նորին Սրբության բոլոր այն մտահղացումներին ու ծրագրերին, որոնք կատարվել են մեր սրբության սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Այս համեստ հոդվածն ընդամենը հարգանքի տուրք է Վեհափառ Հայրապետին, որն իր գահակալության 20 տարվա ժամանակահատվածում, իր անխոնջ եւ անդուլ աշխատանքով նոր լույս տվեց Հայոց Եկեղեցուն, կերպարանափոխեց Սուրբ Էջմիածինը, մեծ մայրուղի բացեց դեպի Մայր տաճար մեր ազգի զավակների համար՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ՝ Սփյուռքի:

Բացառիկ է Հայոց Առաքելական Եկեղեցու եւ Հայոց Հայրապետների դերը մեր բազմադարյան պատմության հոլովույթում: Այդ կապակցությամբ ուզում եմ հիշեցնել մեր նվիրյալ Կաթողիկոսներից մեկի՝ Գ. Չորեքչյանի խոսքերը. «Ամենայն Հայոց Հայրապետը անձ չէ, այլ Հայրապետական գաղափարի մարմնացում»: Իրոք, Հայոց Կաթողիկոսները դարեր շարունակ եղել են նվիրյալները Աստծո եւ Հայաստան աշխարհի, մարմնացումը հայրենիքի եւ ժողովրդի գոյության եւ միասնության գաղափարի, հանդիսացել ոչ միայն դրա կատարողը, այլեւ խորհրդանիշը:

Հայ ժողովրդի անցած բազմադարյան փառավոր ուղին հարուստ է հաղթանակներով, վերելքներով եւ ողբերգություններով, եւ հիացմունքով են հիշվում այն կաթողիկոսները, որոնք ազգի եւ հը եւ ողջ սփյուռքահայությունը ներկայացնող մոտ 470 պատգամավոր ընտրեց նոր Հայոց Հայրապետ՝ Նորին Սուրբ Օծություն Գարեգին Երկրորդին: Միաժամանակ, որպես պատգամավոր, ուզում եմ փաստել, որ ընտրությունը եղել է օբյեկտիվ, անաչառ եւ արդար: Այս հանգամանքը շեշտում եմ հատուկ, քանի որ վերջին ժամանակներում որոշակիորեն Եկեղեցու եւ Վեհափառ Հայրապետի թշնամիները փորձում են աղավաղել, ստվեր գցել այդ ընտրությունների վրա: Վստահ եմ, որ այդ փաստը կարող են հաստատել մասնակից բոլոր պատգամավորները:

Բացի այդ, Հայոց Կաթողիկոսի ընտրության նման բազմամարդ ներկայացուցչական Ազգային-Եկեղեցական ժողով՝ սկսած 1441 թ., չի եղել: 1441 թ. եղել է ամենամեծ ժողովը, երբ Հայրապետական Աթոռը տեղափոխվել է Սուրբ Էջմիածին:

Ազգընտիր Հայրապետը ստանձնեց իր վեհ պարտականությունը՝ պատասխանատվության խոր գիտակցությամբ՝ հավատալով եւ հուսալով Աստծու զորակցությանը եւ ժողովրդի նվիրումին, ինչպես եղել է դարեր շարունակ: Նորընտիր Վեհափառ Հայրապետը, ուղենիշ ունենալով իր երջանկահիշատակ նախորդների ավանդույթը, հռչակեց իր տեսլականը, կանխորոշեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետագա առաջընթացի հորիզոնները: Ստանձնելով այդ բարձրագույն պարտականությունը՝ նորաօծ Հայրապետն ասաց. «Մենք ենք այսօր կրում պատիվն ու պատասխանատվությունը՝ իրականացնելու մեր Եկեղեցու առաքելությունը, եւ թե որքան նախանձախնդրություն, որքան նվիրում ու սեր կներդնենք մեր ծառայության մեջ, դրանով պայմանավորված կլինի հաջողությունը մեր առաքելության»:

Այսօր, երբ հետադարձ հայացք ենք գցում անցած 20 տարվա բարձրությունից, տեսանելի են անդուլ աշխատանքի տարիների փառապանծ նվաճումները:



Եկեղեցու հանդեպ իրենց ունեցած բարձրագույն պարտքը կատարել են անսահման նվիրումով եւ սրբությամբ:

Քսան տարի առաջ Ս. Էջմիածնի Մայր տաճարի մեջ տեղի ունեցավ 132-րդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը: Հայաստան աշխարհի Եկեղեցին պատշաճ դերակատարություն է ունեցել հոգեւոր, կրթության, մշակույթի, ազգային ինքնության պահպանման ասպարեզներում: Վեհափառ Հայրապետի ամենօրյա հոգածության շնորհիվ դաստիարակվել եւ հոգեւոր կրթություն են ստացել հայորդիների ու հոգեւորականների մի նոր սերունդ՝ սկսած հայորդյաց տներից, վերջացրած Գեւորգյան ճեմարանով: Գեւորգյան հոգեւոր ճեմարանն ստացել է աստվածաբանական համալսարանի կարգավիճակ, հաջողությամբ գործում են Սեւանի Վազգենյան դպրանոցը, կարգավորված է բանակի հոգեւոր ծառայությունը: Նորին Սրբության ամենօրյա հետեւողական հոգատարության շնորհիվ է, որ տարեցտարի գրանցվում է եկեղեցականների թվի աննախադեպ աճ: Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնավարման ընթացքում Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր վերածնունդը լիակատար նոր թափ ստացավ: Ստեղծվում են նոր թեմեր, կառուցվում են տաճարներ, կատարելագործվում է Աստվածաբանական կրթական համակարգը: Մեր Եկեղեցին այսօր ակնառու տեղ է զբաղեցնում համաշխարհային քրիստոնեական հանրության մեջ եւ գործում մասնակցություն ունենում միջկրոնական երկխոսության ուղղությամբ: Դրա վառ ապացույցը Վեհափառ Հայրապետի ընտրվելն է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահի պաշտոնում, ինչը ուրախության եւ հպարտության վեհ զգացում առաջ բերեց ողջ աշխարհասփյուռ հայ հանրության շրջանում:

Շարունակությունը՝ էջ 2

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

15 հոկտեմբերի **Վրաստանի վարչապետին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի վարչապետ Գեորգի Գախարիային՝ ուղեկցությամբ Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի:

Ողջունելով Վրաստանի վարչապետի գլխավորած պատվիրակության այցը համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Հայոց Հայրապետը շնորհավորեց տիար Գեորգի Գախարիային՝ վարչապետի կարեւոր պաշտոնն ստանձնելու կապակցությամբ՝ հույս հայտնելով, որ այցը կնպաստի հայ-վրացական դարավոր բարեկամության առավել զորացմանը: Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց երկու ժողովուրդների միջեւ եղած պատմական առնչություններին, որոնք հարուստ են փոխօգնության, զորակցության եւ միասնական պայքարի բազում վկայություններով՝ հաստատելով, որ դրանք այն ամուր հիմքերն են, որոնց վրա պետք է կառուցվի եւ հաստատվի երկու երկրների գործակցությունը:

Հայոց Հովվապետը փաստեց, որ երկու բարեկամ ժողովուրդների հարաբերությունների մեջ առանձնակի դերակատարություն են ունեցել քրիստոնեական հավատքն ու արժեհամակարգը, որոնց շնորհիվ հաղթահարվել են բազում փորձություններ ու դժվարություններ: Նորին Սրբությունը խոսեց նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Վրաց Ուղղափառ Եկեղեցիների կարեւոր դերակատարության մասին՝ ազգային ինքնության եւ մշակույթի պահպանության, հայ եւ վրաց ժողովուրդների համախմբման եւ պետականաշինության գործում:

Իր հերթին վարչապետ Գեորգի Գախարիան Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց Համայն Վրաստանի Իլյա Բ Կաթողիկոս-Պատրիարքի եղբայրական ողջույնները՝ համոզում արտահայտելով, որ երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը հիմնված է եկեղեցական սերտ հարաբերությունների վրա: Վարչապետն ընդգծեց, որ Եկեղեցին մշտապես ունեցել է իր կենսական եւ պետականաշինական նշանակությունը եւ շարունակելու է այդպիսին մնալ: Անդրադառնալով այցի արդյունքներին՝ պրն Գախարիան հավաստիացրեց, որ երկու երկրների եւ ժողովուրդների միջեւ առկա բոլոր հարցերը լուծվելու են եղբայրական հարաբերությունների հիմքի վրա:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն իր շնորհակալությունը հայտնեց Վրաստանի իշխանություններին՝ Վիրահայոց թեմի գործունեությանը զորակցելու եւ Վրաստանի հայ համայնքի նկատմամբ խնամք ցուցաբերելու համար՝ միեւնույն ժամանակ հույս հայտնելով, որ անհրաժեշտ միջոցները կձեռնարկվեն երկրում հայկական մշակութային եւ հոգեւոր ժառանգության պատշաճ պահպանության ուղղությամբ:

Վեհափառ Հայրապետն իր ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Վրաց Ուղղափառ Եկեղեցու պետին, ապա հանդես եկավ առաջարկով. Վրաց Ուղղափառ Եկեղեցու հետ համատեղ, աջակցությամբ նաեւ Վրաց իշխանությունների, կազմակերպել հոգեւոր-մշակութային միջոցառումներ, եկեղեցական արժեքների ցուցադրություններ՝ ի նպաստ երկու ժողովուրդների միջեւ մշակութային եւ հոգեւոր կապերի զորացման:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը եւ խաղաղության ու բարօրության մաղթանքները հղեց վրաց ժողովրդին:

17 հոկտեմբերի **Ճապոնիայի վարչապետի հատուկ հարցերով խորհրդականին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Ճապոնիայի վարչապետի հատուկ հարցերով խորհրդական Էիիչի Հասեգավային՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ջուն Յամադայի:

Այս առիթով Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց պրն Էիիչի Հասեգավային, նաեւ դեսպան Ջուն Յամադային՝ հայ-ճապոնական հարաբերությունների զարգացմանն ուղղված ջանքերի եւ անկախության հռչակման օրվանից Հայաստանին ամենատարբեր ոլորտներում ցուցաբերած օժանդակության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ մեծապես տպավորված է Ճապոնիայի կյանքի տարբեր ոլորտներում տեղ գտած առաջընթացով՝ կարեւոր նկատելով, որ ձեւավորված համագործակցությամբ այդ փորձառությունը նպաստի Հայաստանի առաջընթացին:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց, որ Մայր Աթոռի եւ Ճապոնիայի դեսպանատան միջեւ ձեւավորվել է սերտ գործակցություն, որի շնորհիվ Ճապոնիայի իշխանությունների աջակցությամբ Տոկիոյի վերականգնողական ինստիտուտի կողմից մասնագիտական խորհրդատվություն է ապահովվում Մայր Աթոռին՝ հոգեւոր-մշակութային արժեքների պահպանության եւ վերականգնման գործում, ինչպես նաեւ զորակցություն ցուցաբերվում Տավուշի թեմին՝ կրթական-սոցիալական կենտրոնի ծրագիրը կյանքի կոչելու հարցում:

Իր հերթին Ճապոնիայի վարչապետի խորհրդականն անդրադարձավ երկու երկրների միջեւ ձեւավորված հարաբերություններին եւ գործակցության հետագա զարգացման հեռանկարներին՝ հաստատելով, որ գործադրվում են բոլոր ջանքերը՝ երկկողմ կապերի ամրապնդման եւ խորացման գործում առավել մեծ ձեռքբերումներ արձանագրելու համար:

Հանդիպման ավարտին Ճապոնիայի պատվիրակությունն այցելեց նաեւ թանգարան:

28 հոկտեմբերի **Արեւելքի Ասորի Եկեղեցու պատվիրակությանը**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արեւելքի Ասորի Եկեղեցու պատվիրակությանը՝ առաջնորդությամբ Արեւելքի Ասորի Եկեղեցու պատրիարքարանի միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու, Կալիֆոռնիայի (ԱՄՆ) Արեւելքի Ասորի Եկեղեցու առաջնորդ եւ Սինոդի քարտուղար եպիսկոպոս Մար Ավա Ռոյելի: Պատվիրակության կազմում էին Իրանի թեմի առաջնորդ եպիսկոպոս Մար Նասսայ Բենիամինը, Մելբուրնի եւ Նոր Զելանդիայի եպիսկոպոս Մար Բենիամին Էյան եւ Հայաստանում Արեւելքի Ասորի Եկեղեցու սպասավոր հայր Նիկոդեմոս Ցուխանաեւը:

Ողջունելով պատվիրակության այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր փոխադարձ ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Արեւելքի Ասորի Եկեղեցու պետին: Երախտագիտություն արտահայտելով Արեւելքի Ասորի Եկեղեցու Հովվապետի եւ Սուրբ Սինոդի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման կապակցությամբ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Օսմանյան Թուրքիայում 20-րդ դարասկզբին հայերի դեմ գործված ոճրագործության դատապարտման կարեւորությանը՝ հավելելով, որ քույր Եկեղեցիները եւս ճանաչել ու դատապարտել են այն:

Հանդիպմանը Նորին Սրբությունը հաստատեց նաեւ, որ առիթներ ունեցել է այցելելու Հայաստանի ասորական տարբեր համայնքներ եւ շփվելու համայնքների անդամների հետ՝ ընդգծելով, որ վերջիններս պահպանում են իրենց լեզուն եւ մշակութային առանձնահատկությունները:

Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հետաքրքրվեց Արեւելքի Ասորի Եկեղեցու պատմությամբ եւ մերօրյա առաքելությամբ, Եկեղեցու հովվական իշխանության ներքո գտնվող աշխարհասփյուռ համայնքներով եւ տարբեր երկրներում հայկական համայնքների հետ ձեւավորված կապերով:

Շարունակությունը՝ էջ 3

ԴԵՊԻ ՆՈՐԱՆՈՐ ԱՐԾԱԼՈՒՅՑՆԵՐ

Սկիզբը՝ էջ 1

Այդ ընտրությունն Ամենայն Հայոց Հայրապետի տարիների կատարած աշխատանքի արդյունքն է, որն ուղղված է Եկեղեցիների եւ օտար կրոնական կազմակերպությունների հետ մեր Եկեղեցու հարաբերությունների ընդլայնման եւ համակարգման կարեւոր գործին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինարարական կյանքում վերելքի նոր ժամանակաշրջան է: Այդ աշխատանքների մեջ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում Մայր տաճարը եւ նրա շրջակա տարածքը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանը, նոր Վեհարանի գոտին եւ բազմաթիվ այլ վերակառուցումներ:

Այսօր Մայր Աթոռն իր հոյակերտ բովանդակությամբ դարձել է հոգեւոր հզոր կաճառ, որը նաեւ հայագիտության եւ ուսումնական կենտրոն է:

Հազարամյակների պատմությամբ ծանրաբեռ Հայաստան աշխարհի գոյությանը սպառնացող օրհասական բոլոր պահերին, երբ սասանվել է հայ ազգի միասնական անվտանգությունը, վճռորոշ է եղել ազգի միասնական ոգին, որը գլխավորել է Հայ Առաքելական Եկեղեցին՝ իր գահակալներով, քանզի հարյուրամյակներ շարունակ մենք չենք ունեցել պետականություն: Այսօր՝ այս փոթորկալի ժամանակներում եւս, ազգային միասնությանը սատարող եւ անխախտ պահող նվիրյալներ են պետք, պետք է հավատ առ Աստված, հավատ Հայ Առաքելական Եկեղեցու եւ նրա սպասավորների նկատմամբ:

Յուրաքանչյուր անձ պետք է հոգեպես կույր լինի, որ չտեսնի այն մեծագույն նվաճումները, որոնք ձեռք են բերվել Վեհափառ Հայրապետի քսանամյա քրտնաջան աշխատանքի եւ Եկեղեցուն անմնացորդ նվիրվածության շնորհիվ: Նա ազգի եւ Եկեղեցու նվիրյալ է՝ օժտված եղածը պահպանելու, բազմապատկելու, նորն ստեղծելու շնորհով եւ տաղանդով: Նա դարձել է մեր երկրի եւ Եկեղեցու սրբազան ավանդությունների ջահակիրը:

Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակի առիթով մաղթում ենք նրան քաջառողջություն եւ լիահույս ենք, որ նա բազում տարիներ եւս առաջնորդելու է Հայոց Եկեղեցու նավը դեպի նորանոր արշալույսներ...

Վիլեն ՀԱԿՈԲՅԱՆ
Բժշկական գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հոգեհանգստյան կարգ՝ Ս. Էջմիածնի բարերար Ջոն Քյուրֆչյանի համար

Հոկտեմբերի 14-ին Ս. Գայանե վանքում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարերար Ջոն Քյուրքչյանի հոգու խաղաղության եւ հանգստության համար: Նրա ծնողների՝ Մայր Աթոռի բարերարներ Սարգիս ու Աստղիկ Քյուրքչյանների եւ եղբոր՝ Ջորջ Քյուրքչյանի շիրիմների կողքին է ամփոփվել նաեւ Ջոն Քյուրքչյանի աճյունը, որը միշտ սիրով ու հավատարմությամբ փարված էր Հայոց Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ նախանձախնդիր էր համազգային կյանքի անդաստանների շենացման գործում:

Հանգուցյալ Ջոն Քյուրքչյանի եւ Քյուրքչյան ընտանիքի բարերարությամբ 2018 թվականի հունիսից Սուրբ Գայանե վանքին կից գործում է նաեւ Մայր Աթոռի «Քյուրքչյան» երեխաների աջակցության կենտրոնը, ուր ներկայում խնամվում են սոցիալապես անապահով եւ ծնողական խնամքից զուրկ 16 մանուկ եւ պատանի:

Հոգեհանգստյան արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ ու Քյուրքչյան ընտանիքի անդամներ:

Հավարտ արարողության՝ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական օրհնությունը եւ մխիթարական խոսքն ուղղեց Քյուրքչյան ընտանիքի անդամներին:

«Նրա մահը մեծ կորուստ եղավ մեր Սուրբ Եկեղեցու եւ ժողովրդի համար: Այս անցյալ տարվա ընթացքում ապրեցինք նրա կորստի ցավը, ինչպես նաեւ մխիթարվեցինք նրա պայծառ հիշատակով: Մեր ժողովրդի ու Եկեղեցու պատմության վերջին տասնամյակների թե՛ դժվարին եւ թե՛ ուրախ պահերին սիրելի Ջոնը բազում անգամներ իր բարերար գործունեությամբ շենություն է հավելել ազգային-եկեղեցական մեր կյանքին՝ ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի: Տարիներ շարունակ Ջոն Քյուրքչյանը Լոնդոնի հայ համայնքի ակտիվ անդամ էր՝ հարատեւ իր կարողություններով աջակցելով եկեղեցու առաքելությանը: Քյուրքչյան ընտանիքի առատ նվիրատվությունների շնորհիվ իրագործված մի շարք ծրագրեր այսօր իրապես տալիս են իրենց օգտակար պտուղները՝ օրհնություն դառնալով շատերի կյանքում եւ զարդարելով բարերար ընտանիքի հիշատակը: Այսօր վերստին առիթ ունենք մատուցելու մեր սրտագին գոհունակությունը առ Աստված՝ Ջոն Քյուրքչյանի կյանքի եւ վաստակի համար՝ որպես սիրող ամուսնու, հոր, եղբոր եւ հորեղբոր, որի հիշատակը կլինի հավիտենապես օրհնյալ:

...Երկրավոր իր ընթացքն ավարտելով՝ նա փոխադրվեց հավերժություն, որտեղ Տերը, Իր անգին խոստման համաձայն, հավիտենական կյանքի երանությունն է պարգեւում Իր հավատարիմ զավակներին: Ի խորոց սրտի հայցում ենք, որ ողորմածն Աստված երկնային բարձունքներում հավիտենական երանության մեջ հանգչեցնի Իր երախտարժան զավակի՝ Ջոն Քյուրքչյանի հոգին եւ Սուրբ Հոգու մխիթարություն պարգեւի ազնվափայլ տիկնոջը՝ սիրելի Քրիստինային, զավակներին, զարմուհուն ու վշտացյալ բոլոր հարազատներին եւ մեզ՝ ամենքիս»,– մասնավորապես ասաց Վեհափառ Հայրապետը՝ հայցելով ամենագութ Աստծուն, որ երկնից լուսեղեն հանգրվաններում խաղաղությամբ հանգչի հոգելույս Ջոն Քյուրքչյանը՝ իր սիրեցյալ ծնողների եւ եղբոր հետ միասին:

Քրիստոնեական միջդավանական խորհրդակցական հանձնախմբի 4-րդ գումարումը Մոսկվայում

Հոկտեմբերի 30-ին Մոսկվայում կայացավ Քրիստոնեական միջդավանական խորհրդակցական հանձնախմբի 4-րդ գումարումը՝ Ռուսաստանի Դաշնության տարածքում գործող երեք քրիստոնեական հարանվանությունների՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու, Կաթոլիկ եւ Ավետարանական-Լյութերական Եկեղեցիների նախաձեռնությամբ եւ նախագահությամբ: «Ավետարանի անանց ուժը եւ դրա նշանակությունը ժամանակակից հասարակության համար» ընդհանուր խորագրի ներքո քննարկման հիմնական թեման ավետարանական քարոզչության եւ ժամանակակից հասարակության փոխհարաբերությունների հիմնախնդիրներն ու դրանց հաղթահարման ուղիների մատնանշումն էր:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ գումարմանը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե ծ. վրդ. Անանյանը, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմից Պողոս աբդ. Վարդանյանը եւ Գեւորգ քհն. Վարդանյանը:

Տեղի ունեցավ չորս կլոր սեղան քննարկում.

ա. Հետեւել Քրիստոսին: Քրիստոնեական ինքնությունն այսօր,

բ. Խաղաղասիրությունն իբրեւ ավետարանական ճանապարհ,

գ. Ավետարանն իբրեւ ժամանակակից հասարակության բարոյական ուղեցույց,

դ. Ավետարանը եւ հասարակական ծառայությունը:

Սրանց եզրահանգումների հիման վրա ամփոփվեցին համաժողովի արդյունքները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Շվեյցարիայի աստվածաշնչային ընկերության ներկայացուցիչներին

Սկիզբը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Շվեյցարիայի աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Էվա Թոմիի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Հայաստանի աստվածաշնչային ընկերության գլխավոր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանի եւ ՀԱԸ-ի ծրագրերի ղեկավար Արշավիր Գաբուճյանի:

Հանդիպմանը Եզնիկ արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց պատվիրակության Հայաստան այցի նպատակները եւ երկու կառույցների միջեւ ձեւավորված արդյունավետ համագործակցությունը՝ մասնավորապես նշելով, որ հյուրերն այս օրերին այցելել են տարբեր սրբավայրեր, ծանոթացել Հայաստանի աստվածաշնչային ընկերության ծրագրերին եւ առաջիկա օրերին մասնակցելու են «Քայլող Ավետարան» ծրագրին եւ ժեստերի լեզվով թարգմանված Աստվածաշնչի երրորդ տեսասկավառակի շնորհանդեսի արարողությանը:

Այնուհետեւ Նորին Սրբությանը ողջունեց եւ գահակալության 20-ամյակի կապակցությամբ շնորհավորեց նաեւ տիկին Էվա Թոմին՝ երախտագիտությամբ անդրադառնալով Հայաստանի աստվածաշնչային ընկերության օգտաշատ ծառայությանը տարբեր ծրագրերի միջոցով Սուրբ Գրքի տարածման գործում: Տիկին Թոմին իր ուրախությունն արտահայտեց Հայաստանի աստվածաշնչային ընկերության հետ ձեւավորված գործակցության առիթով՝ նշելով, որ սա արդեն իր երրորդ այցելությունն է Հայաստան:

Այնուհետեւ ներկաներին իր օրհնությունը բաշխեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Կարեւորելով Աստվածաշնչային ընկերությունների դերն ու առաքելությունը Աստծո խոսքի տարածման հարցում՝ Վեհափառ Հայրապետը ողջունեց այն սերտ գործակցությունը, որը ձեւավորվել է Շվեյցարիայի եւ Հայաստանի աստվածաշնչային ընկերությունների միջեւ, որի արդյունքում իրագործվել են բազմաթիվ աստվածահաճո նախաձեռնություններ: Այս առիթով Նորին Սրբությունը մասնավորապես բարձր գնահատեց «Աստվածաշունչը ժեստերի լեզվով» եւ «Քայլող Ավետարան» ծրագրերը, ինչպես նաեւ Մայր Աթոռի կառույցների եւ թեմերի հետ համագործակցաբար Հայաստանի աստվածաշնչային ընկերության կողմից կազմակերպվող ուսուցիչների վերապատրաստման դասընթացները:

Ի դեմս ներկաների՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Միացյալ աստվածաշնչային ընկերություններին այն աջակցության համար, որ ցուցաբերվում է Հայաստանի աստվածաշնչային ընկերությանը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց ներկաներին շարունակել ընդլայնել համագործակցությունը եւ նպաստել օգտակար ծրագրերի իրականացմանը՝ հաստատելով, որ Սուրբ Գրքի եւ աստվածաշնչյան պատվիրանների վրա պետք է խարսխվի յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքը, որպեսզի այն լինի պտղաբեր եւ խաղաղ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսադեսեց Դիլիջանի եկեղեցու հիմնօրհնեքի արարողությունը

Հոկտեմբերի 18-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Տավուշի թեմի Դիլիջան քաղաքում տեղի ունեցավ եկեղեցու հիմնօրհնեքի հանդիսավոր արարողությունը: Եկեղեցու հողօրհնեքը կատարվել էր դեռեւս 2015 թվականին: Եկեղեցաշինական ծրագրի իրականացման բարերարներն են տեր եւ տիկին՝ Ռուբեն Վարդանյանն ու Վերոնիկա Զոնաբենդը, Մաքսիմ Աթայանցը, Արմեն Կարապետյանը եւ Նորայր Թեւանյանը:

Տավուշի մարզի սահմանագլխին Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանը եւ մարզպետ Հայկ Չոբանյանը, որից հետո Վեհափառ Հայրապետն իր շքախմբով ուղեւորվեց Դիլիջան: Կառուցվելիք եկեղեցու մոտ Նորին Սրբությանը դիմավորեցին աղուհացի ավանդական արարողությամբ:

Հիմնօրհնեքի սրբազան արարողությանը ներկա էին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, եկեղեցու բարերարները, «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության ու «Ավրորա» միջազգային ֆորումի մասնակիցները, Դիլիջանի բնակիչներ:

Արարողության սկզբում սաղմոսների երգեցողության ներքո կառուցվելիք եկեղեցու հիմքերում տեղադրվելիք 16 քար լվացվեց ջրով ու գինով, ապա հանձնվեց ընտրված 16 կնքահայրերին: Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրբալույս մյուռոնով օծեց վեմքարերը, որոնք կնքահայրերի կողմից տեղադրվեցին առաքյալների, ավետարանիչների եւ սուրբ Գրիգոր Լուսավորչի անունը կրող վեմերի հիմքում:

Արարողության ավարտին ներկաներին ողջունեց Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանը: Սրբազան հայրը, իր ուրախությունը հայտնելով Դիլիջան քաղաքի եկեղեցու հիմնօրհնեքի կապակցությամբ, մասնավորապես նշեց. «Այսօր Դիլիջան քաղաքի 475-ամյակն է: Ես չեմ կարող ասել, թե ինչ սկզբնավորությամբ են որոշել 475-ամյակը, բայց վստահաբար կարող եմ վկայակոչել Գրիգոր Մագիստրոս Պահլավունի զորավար մտավորականին, թե այս դրախտավայրում մարդիկ մոռանում են մահվան մասին: Այսօր այս եկեղեցու հիմնօրհնեքով, Վեհափառ Հայրապետի ձեռամբ քարերի օծումով, մենք վերստին վկայում ենք մահվան մասին մոռանալու վերաբերյալ: Հատկապես ուզում եմ ասել, որ սա արդարության պատասխանն է ժամանակների մեջ գործված այն մեղքին, որ մենք մեր ձեռքերով քանդեցինք աստվածային տներն այս քաղաքում, վերածեցինք ամեն ինչի, բացի Աստծո ներկայության կարեւորագույն հոգեվիճակի: Մենք այսօր դրա պատասխանն ենք տալիս՝ փորձելով այս ճանապարհով սրբել մեղքը բոլոր նրանց, ովքեր իմանալով կամ չիմանալով գործեցին այն»:

Բագրատ սրբազանը նաեւ իր խորին երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ Տավուշի թեմի հանդեպ ցուցաբերած հայրական հոգածության համար:

Այնուհետեւ իր հայրական օրհնությունն ու պատգամը ներկաներին ուղղեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Սիրելինե՛ր, ուրախ ենք այսօր մեր Սուրբ Եկեղեցու հավատավոր զավակներիդ հետ համախմբված լինելու Դիլիջանի եկեղեցու հիմնօրհնեքի արարողությանը: Հոգու բերկրանքով ենք հիշում, որ տարիներ առաջ այսպիսի խանդավառ եւ աղոթալի միջավայրում կատարեցինք հողօրհնեքի արարողությունը՝ հայցով ու փափագով, որ Տիրոջ օրհնությամբ իրականություն դառնա եկեղեցու կառուցումը՝ դիլիջանցիների հոգեւոր կյանքի զորացման ու առաջընթացի համար:

Մեր անկախության վերահաստատմանը նախորդած աստվածամարտ ու եկեղեցահալած հասարակարգի պայմաններում հայրենի շատ գյուղեր ու քաղաքներ զրկվեցին աղոթավայրերից, բարբարոսաբար ոչնչացվեցին ու կործանվեցին վանքեր ու եկեղեցիներ, չարչարանքների ենթարկվեցին ու նահատակվեցին բազմաթիվ հոգեւորականներ: Մարդու բարեկեցության, հավասարության, կրթության, համայնավարության գաղափարների տակ տասնամյակներ շարունակ բռնությամբ ճնշվում էին հավատքի, հոգեւոր աշխարհայացքի, հոգեւոր արժեքներին նվիրվածության դրսեւորումները: Դիլիջանը եւս այն քաղաքներից էր, որտեղ ոչնչացվեցին եկեղեցիները: Հավատավոր դիլիջանցիներդ, տասնամյակներ շարունակ եկեղեցի չունենալով հանդերձ, այս վերջին տարիներին ձեր քահանայի նախանձախնդիր եւ հոգածու առաջնորդությամբ միշտ մասնակից եք եղել պատարագներին, հոգեշահ արարողություններին՝ պաշտամունքների համար հատկացված առանձին սրահում: Հայոց հոգեւոր կյանքի զարթոնքի պատմական այս տարածաշրջանում, մեր հնամենի վանական համալիրների՝ Հաղբատավանքի, Գոշավանքի, Մակարավանքի եւ մեր նշանավոր այլ սրբավայրերի հայացքի ու շնչի ներքո բնակվող հայորդիներդ ձեր սրտերում վառ եք պահել փափագը աղոթավայր ունենալու, եւ այսօր Աստծո ողորմությամբ իրականություն է դառնում նվիրական այդ երազանքը:

Մենք գոհունակությամբ ենք հաստատում, որ թեեւ պատմության հոլովույթներում մեզ պատուհասած փորձությունների ընթացքին Աստծո եւ հավատքի դեմ մարտնչողները քանդեցին եկեղեցիները, բայց երբեք չկարողացան կործանել հայոց հավատքը, որ թրծվել էր դարեր ի վեր այդ եկեղեցիներում, չկարողացան մեր ժողովրդին հեռացնել իր Աստծուց, իր սրբերից, ազգային-հոգեւոր մշակույթի հիասքանչ ժառանգությունից: «Ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրված այն հիմքը, որ Հիսուս Քրիստոսն է»: Հիրավի, մեր հոգեղեն եկեղեցին, մեր հավատքը դրված է Քրիստոսի հիմքի վրա, եւ Տիրոջ խաչելությունն ու հաղթական հարությունը նաեւ փորձությունների, ցեղասպանության ենթարկված մեր ժողովրդի ու մեր եկեղեցիների չարչարանաց ու հարության պատմությունն են: Հալածվելով ու ոչնչացման տարվելով՝ մեր ժողովուրդը խաչվեց, բայց չմեռավ, այլ հարություն առավ: Մեր հայրենի հողում եւս եկեղեցիներ են կրկին վեր հառնում, պայծառանում եւ իրենց դռները բացում հավատացյալների առջեւ: Եվ այս հաղթական ընթացքի գրավականը Հիսուս Քրիստոսն է, որի վրա՝ որպես հիմքի, հաստատված է Սուրբ Եկեղեցին: Ընդհանրական հայրերից սուրբ Եփրեմ Ասորին ասում է. «Եկեղեցին հոգեւոր դրախտ է, որտեղ հաշտության սուրբ խորանը կյանք բխող կենաց ծառն է: Արդ, վայելեք այն շնորհները, որ ձեզ համար պատրաստել է Հայրը, եւ միաբերան փառաբանեք Աստծուն»: Մեր ժողովրդի համար այս ընկալումով եկեղեցին միայն ճարտարապետական կոթող ու քարեղեն կառույց չէ, այլ աստվածային ներկայության, երկնային շնորհների բաշխման, հոգիների մաքրման ու ապաքինման վայր, ժամանակավորի միջից հավիտենության առաջնորդող հաստատություն՝ հիմնված Քրիստոս Վեմի վրա: Մեր եկեղեցական կառույցների հովանու ներքո հաստատված մեր դպրոցներում ու համալսարաններում սերունդներ են կրթվել, զորացել ազգասիրությամբ ու հայրենասիրությամբ: Եվ եկեղեցին՝ Քրիստոսի վրա հաստատված, եղել ու մնում է պատվարն ու հիմնայունը մեր ազգային-քրիստոնեական ինքնության, հայ ոգու անպարտելիության եւ մեր փրկության ու հարատեւության: Աշխարհի փոթորկահույզ ընթացքների, հակառակությունների մեջ եկեղեցին նաեւ այն վայրն է, որտեղ բոլորին խաղաղություն է տրվում, համերաշխության ոգին զորանում, միասնությունն ու միաբանությունը ամրապնդվում: Այստեղ աստվածպաշտական արարողություններին հավաքվում են տարբեր հայացքների, տեսակետների, դիրքորոշումների տեր անձեր, որոնք օրհնյալ միջավայրում միավորվում են հավատքով, աստվածպատվեր նվիրական զգացումներով:

Ուրախալի այս արարողության առիթով մեր հոգիները վկայում են, որ եկեղեցաշեն ու ազգանպաստ իրագործումների համար երկնառաք բյուր պարգեւներ պիտի շնորհվեն հավատավոր ազգիս հայոց ի հայրենիս եւ ի սփյուռս աշխարհի: Գոհունակ սրտով հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում եկեղեցու բարերարներին՝ տեր եւ տիկին՝ Ռուբեն Վարդանյանին եւ Վերոնիկա Զոնաբենդին, ինչպես նաեւ՝ մեծարգո տիարք Մաքսիմ Աթայանցին, Արմեն Կարապետյանին, Նորայր Թեւանյանին, որոնք գովարժան հանձնառությամբ իրենց բարի ներդրումն են բերում հոգեւոր-եկեղեցական մեր կյանքի պայծառությանը: Ուրախությամբ ենք հաստատում, որ ի մասնավորի մեծարգո տիար Ռուբեն Վարդանյանի նախաձեռնությամբ Վրաստանի Սուրբ Գեւորգ եկեղեցու նորոգման իրագործումին գալիս է հավելվելու նաեւ Դիլիջանում կառուցվող եկեղեցին: Նվիրյալ հայորդու կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերն ու միջոցառումները՝ ուղղված կրթության բարելավմանը, տնտեսության զորացմանը, զբոսաշրջության զարգացմանը, Հայոց ցեղասպանության ճանաչմանը, եւ այլ նախաձեռնություններ հանրահայտ բարերարին արժանացրել են մեր հավատավոր ժողովրդի սիրուն ու երախտիքին:

Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Տավուշի թեմի հոգեւոր դասին՝ առաջնորդությամբ Բագրատ եպս Գալստանյանի, իրենց անձնվեր եւ հոգեխնամ ծառայության արդյունավորման համար: Մեր գնահատանքը նաեւ մարզային, քաղաքային իշխանություններին՝ մեր Սուրբ Եկեղեցու առաքելությանն աջակցելու համար:

Շարունակությունը՝ էջ 5

ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆ. չժպտացող մարդը

(ծննդյան 150-ամյակի առթիվ)

Սկիզբը՝ թիվ 19

1902-ին Օտյանը վերադառնում է Եգիպտոս, աշխատում Ալեքսանդրիայի ծորակներ արտադրող ձուլարանում՝ որպես հաշվակալ, 1904-ին մեկնում Հնդկաստան, նույն թվականին նորից վերադառնում Ալեքսանդրիա: Այս շրջանում է, որ Օտյանը սուլթան Համիդի դեմ կատարված մահափորձի վերաբերյալ ուշագրավ հաղորդում է տպագրում, որում խոսում է նաեւ բուլղարացի հեղափոխականներից ձեռք բերված պայթուցիկ որոշ նյութերի անորակության մասին, ինչը փոքրացրել էր ազդեցության շրջանակը եւ սպասված արդյունքը չէր տվել (սուլթանը միայն վիրավորվեց):

1909-ի հունվարին՝ տասներկու տարվա բացակայությունից հետո, Օտյանը թուրքական «Օսմանիե» շոգենավով վերադառնում է Կ. Պոլիս: Իր այդ բացակայության տարիների մասին նա գրել է «Տասներկու տարի Պոլսեն դուրս» վերնագրով իր լավագույն գործերից մեկը: Հուշագրությունը գրվել է 1902–12 թթ. ընկած ժամանակահատվածում: Առաջին անգամ տպագրվել Կ. Պոլսի «Ժամանակ» թերթի 1912–13 թթ. համարներում, իսկ հետագայում գրական վերամշակմանը զուգընթաց լրացվել է նաեւ «Արյունոտ հիշատակների» հատվածներով, որտեղ պատկերված շատ հերոսներ հանդես են բերված իրենց բուն անուններով, որոշ հերոսներ էլ՝ «Արտասահմանի գործիչի» Կակայանցը, որ Գարեգին (Գասպար) Պապայանց-Խաժակն է, «Խմբագրի» Զաքեոսը, որ Ռեթեոս Մուրադյանն է, Վարդհոգյանը, որ Հարություն Ջանկյուլյանն է (այս ազգանվան բաղադրիչները՝ «ջան» եւ «գյուլ», Օտյանը թարգմանել է վարդ եւ հոգի, որից եւ գոյացել է Վարդհոգյանը), խտացված ընդհանրական տիպեր են՝ այդ օրերի իրողություններն ու հոգեբանությունն իրենց մեջ արտացոլող ուշագրավ դեմքեր:

Օտյանի այս գործը կարեւորվում է ոչ միայն գեղարվեստական գրավիչ շարադրանքով, այլեւ ներկայացվող դեպքերի ու անձերի վավերականությամբ: Այն իրականում պատմական վավերաթղթի արժեք ունի, որը վկայել է նաեւ հեղինակը. *«... իմ պատմած իրողություններու բոլոր վկաները, բարեբախտաբար, ողջ առողջ են տակավին եւ ի հարկին կրնան ըսել, թե ոեւէ չափազանցություն չկա հիշատակներուս մեջ» (էջ 141)*:

Վերոհիշյալ հուշագրությունն սկսվում է 1895-ի դեկտեմբերին «Հայրենիք» թերթի խմբագրապետ Արփիար Արփիարյանի՝ Կ. Պոլսի Տագսիմի պարտեզի դեմ դաշունահարության պատմությամբ եւ ավարտվում թուրքական սահմանադրության հռչակման շնորհիվ համիդյան բռնակալներից մեկի՝ շեյխ Վահեդդինի՝ սուլթան Բայազեդի հրապարակում կախաղան հանվելու իրողության փաստումով: Շուրջ հինգ հարյուր էջ կազմող այս գործը գեղարվեստական խոսքի հարուստ դրսեւորումներով ներկայացնում է Օտյանի կյանքի այն հատվածը, որ կապված է 1896-ին Կ. Պոլսում ծավալված իրողությունների եւ մանավանդ արտասահմանյան մի շարք երկրներում ու քաղաքներում (Հունաստան, Եգիպտոս, Փարիզ, Լոնդոն, Վիեննա, անգամ՝ Հնդկաստան) ապրած երկար ու ձիգ տասներկու տարվա հետ, որում ծավալուն տեղ է զբաղեցնում Եգիպտոսի ու այնտեղ հանգրվանած եգիպտահայ գաղթականության կյանքը՝ հագեցած ազգային ու համամարդկային ճակատագրի բազում իրողություններով ու ընդհանրացումներով:

Ինչպես ժամանակին «Բյուզանդիոն» թերթն է նշել, Օտյանի այս գիրքը *«արտասահմանի թափառիկ հայության պատկերն է» («Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1914)* ներկայացնում՝ դրանով իսկ դառնալով սփյուռքահայության կյանքի առաջին գեղարվեստական մարմնավորումներից մեկը, այն նախահիմքը, որտեղ պատկերվեց մայր հողից ու ծննդավայրից բռնագաղթած հայ ժողովրդի սպառումը, որը տարիներ անց պիտի դառնար սփյուռքահայ գրականության հիմնական ասելիքն ու բովանդակությունը, ասել է թե՝ ամենօրյա ուծացումը, որն այսօր էլ մնում է արդիական: Գրքում Օտյանն ամեն բան դիտում է երկակի հայացքով՝ ողբերգականի եւ ծիծաղելիի համադրումներում, որտեղ, ի վերջո, միակ անկորնչելին հայրենիքի նկատմամբ տածվող սերն է:

Հուշագրությունը պարունակում է ուշագրավ մանրամասներ ինչպես ժամանակաշրջանի, այնպես էլ հենց հեղինակի կյանքի վերաբերյալ: Եվ ոչ միայն Օտյանի, այլեւ գրական այնպիսի դեմքերի, ինչպիսիք են Արփ. Արփիարյանը, Մ. Կյուրճյանը, Լ. Բաշալյանը, Ա. Չոպանյանը... Այն նաեւ հավաստի արտացոլանքն է մի տանջալից ուղու, որով անցել էր արեւմտահայությունը, մատնանշումը սուլթանական Թուրքիայի ճիրաններում հայերի զոհողությունների, նաեւ արժանի տուրք բոլոր այն նահատակներին, որոնք իրենց կյանքի գնով պայքարեցին օսմանյան մոլոխի դեմ:

Օտյանի այս հուշագրությունն առանձնանում է նաեւ նրանով, որ այնտեղ հանդես են բերվում մարդկային բազմաբնույթ տիպարներ, որոնք հետագայում եւս օգտագործվել են գրողի այս կամ այն գործում, դարձել յուրատեսակ բնորդներ՝ մարդկային էության ու վարքագծի այս կամ այն դրսեւորումները գեղարվեստական խտացման ենթարկելու համար: Դրանք շատ-շատ են՝ ծննդավայրից հալածված տարագիրներ, անապահով ու ավուր հացի կարոտ մտավորականներ, «ազգի փրկչի» ու «որ մենք հերոսի» անուն շինած արկածախնդիրներ, իրական հերոսների նկարագիր ունեցող հայրենասերներ ու ազգային գործիչներ եւ այլն:

Հուշագրությունում ամեն բան առնչվում ու մեկնվում է հայ զանգվածների ազգային խնդիրների ու մտահոգությունների դիրքերից, հաստատվում ժողովրդի կենսունակության այն հատկանիշը, ըստ որի՝ ուր էլ ոտք է դնում տարագրված հայը, իսկույն ձեռնամուխ է լինում թերթերի, վարժարանների, մտավոր կենտրոնների հիմնման: Բայց այս ամենից վեր տիրապետող գործոնը, գլխավոր ու հիմնական հեղինակային ասելիքը *կարոտաբաղձության* փաստումն է, որ մաշում է ամենքին, պայմանավորում նրանց ապրելաձեւը, թելադրում գործունեությունը: Այդպիսի մի պատկեր է Արփ. Արփիարյանի եղբոր՝ Տիգրան Արփիարյանի պատմությունը: Այլեւս չդիմանալով օրավուր աճող կարոտին՝ նա որոշում է գաղտնաբար Պոլիս վերադառնալ. *«Եթե հոս մնամ, կմեռնիմ... եթե թիարան ալ ղրկեն՝ պիտի երթամ Պոլիս...» (էջ 143)*:

Արհամարհելով սպասվող վտանգները՝ նա մեկնում է Պոլիս, որտեղ անմիջապես ձերբակալվում է եւ բանտարկվում: Օտյանը չի խուսափում ցույց տալ նաեւ ներկուսակցական բախումները, այն հոռի պահվածքը, որը հաճախ պայմանավորվում էր շահի դիրքերով: Այս առումով բնութագրական է Օտտոմանյան բանկ մտած հերոսներից Արմեն Կարոյի (բուն անունով՝ Գարեգին Փաստրմաճյան, Կարինի նախկին մեպուսը) կյանքի մի դրվագի հիշատակումը, որն Օտյանին պատմել է հեղափոխական հենց այդ գործիչը: Այն մեջ ենք բերում ամբողջովին. *«Կարո երբ հեղափոխական գործին մասնակցելու որոշում կուտա՝ կը գրե Նազարբեկի, որ պատրաստ է անձը եւ դրամը զոհել ազատության համար ու կը խնդրե Նազարբեկին, որ իրեն ըսե, թե ինչ բանի մեջ օգտակար կրնա ըլլալ:*

– Անձի պետք չունինք, դրամդ ղրկե՛,– կը պատասխանե Մարոյի ամուսինը» (էջ 87):

Հուշագրության արժանիքներից մեկն էլ այն է, որ Օտյանը գրում է ոչ թե միայն «Պոլսեն դուրս» ապրող հայերի ու նրանց վիճակված կյանքի, այլեւ 1908-ից, այսպես ասած, սահմանադրությունից հետո «Պոլսեն ներս» տեղի ունեցած իրադարձությունների մասին՝ փաստելով, որ կարճատեւ ոգեւորությունից հետո արեւմտահայության վիճակը լեցուն էր մահվան նույն մղձավանջներով ու սարսուռներով, ինչպիսին էր մինչեւ *«հեղափոխությունը»*, որն իրականում հեղաշրջում էր՝ հետամուտ հայատյացության նույն ծրագրերին:



Հուշագրությանը տրված վերնագիրը շատ ավելի ընդգրկուն է, քան կարող է թվալ առաջին հայացքից: *Դուրս* ասելով՝ չպիտի հասկանալ որեւէ վայրից (տվյալ դեպքում՝ Կ. Պոլսից) դուրս լինելը, այլ ամեն բանից դուրս լինելը՝ երկրից, ծննդավայրից, գաղափարների զոհողությունից, ազգությունից, ազնվությունից, մարդկայնությունից... Օտյանի պատկերած շատ հերոսներ հենց այդպիսին են, թեեւ քիչ չեն նաեւ նրանք, ովքեր ներսում են ու մարդկային բարձր որակներ են դրսեւորում, որոնցից մեկն էլ հենց ինքը՝ հեղինակն է՝ ակտիվ մասնակիցը հայ կյանքի բազում դեպքերի ու շրջադարձերի:

1915 թ. համատարած բռնությունների շրջանում Եր. Օտյանը 21 օր թաքնվում է դեռեւս Եգիպտոսից իրեն ծանոթ բարեկամներից մեկի՝ Կարապետ Տիրհեմճյանի (Թեոդիկի վկայությամբ՝ Կ. Տիրհեմճյանն Օտյանի կերտած գրական հերոսներից մեկի՝ Իգնատ աղայի նախատիպն է) բնակարանում, սակայն մտածելով, որ աքսորյալ ընկերները տեսնելով, որ իրենց շարքերում չէ, կկարծեն, թե ինքը դավաճան է, դուրս է գալիս թաքստոցից, հաջորդ օրն իսկ ձերբակալվում եւ սեպտեմբերի 13-ին մեղադրվելով որպես... *տեռորիստ*՝ շատերի հետ աքսորվում, Ալ. Շիրվանզադեի բնութագրմամբ՝ դառնալով *«մարմնացած վիշտ»*:

Շարունակելի

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսադրեց Դիլիջանի եկեղեցու հիմնօրհնեքի արարողությունը

Սկիզբը՝ էջ 4

Հայրական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ձեզ, սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր, եւ հայցում, որ բարձրյալ Տերը ամենախնամ Իր Սուրբ Աջով պահպանի ձեզ՝ պարգեւի երջանկություն ու երկնահեղ բարիքներ ձեզ, ձեր ընտանիքներին:

Աղոթում ենք առ ամենակալն Աստված, որ խաղաղության ու ապահովության մեջ պահի հայրենի մեր երկիրը, հաջողություններով պսակի աշխարհասփյուռ մեր ժողովրդի ազգային, հոգեւոր-եկեղեցական կյանքի շինության ու պայծառության համար իրականացվող բոլոր ձեռնարկումները»:

Արարողության մասնակիցներին իր ողջույնը փոխանցեց Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանը: Վերջինս ընդգծեց, որ այսօր Դիլիջանում հոգեւոր տոն է եւ հոգեւոր խորհուրդ, քանի որ տարիներ ու տասնամյակներ հետո բարերարների շնորհիվ քաղաքին վերադարձվում է իր եկեղեցին:

Շնորհակալական խոսքով հանդես եկան նաեւ Դիլիջանի քաղաքապետ Արմեն Սանթրոսյանը եւ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի տնօրեն Ռաֆֆի Պաղճյանը:

Ապա գեղարվեստական ելույթներով հանդես եկավ Դիլիջանի համայնքային կենտրոնի «Նազանի» պարային խումբը: Արարողությունից հետո Նորին Սրբությունն այցելեց նաեւ Դիլիջանի միջազգային դպրոց:



Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Ղեւոնդ քհն. Տյոմկինն ազատվել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի փոխտեսչի պաշտոնից եւ ծառայության կոչվել Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում՝ թեմական առաջնորդի իշխանության ներքո:

Նժդեհ քհն. Քեշիշյանը, ազատվելով Բուլղարիայի հայոց թեմում ստանձնած հոգեւոր պարտականություններից, իր հովվական ծառայությունը կբերի Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում՝ թեմական առաջնորդի իշխանության ներքո:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Սիրահար աստղերի զրույցը

Սկիզբը՝ թիվ 19

Նույն ժամանակ՝ նոյեմբերին, հենց Բաքվում Իսահակյանն առանձին թղթի վրա երրորդ անգամ գրի է առել սիրահար աստղերի լեգենդը՝ «Աստղերի սերը», որ դարձյալ պատմել է երկրի ու երկնքի գեղեցկությանը սիրահար գուսանը, պատմել է երգով՝ բնության գրկում. «Երկնքում երկու աստղ կա, մեկը հեռու արեւելքում, մեկը՝ արեւմուտքում. նրանք իրար վրա սիրահարված են, բայց հեռո՛ւ են, չեն կարող իրար մոտենալ: Իրարուց հեռու այդ սրտերը մխում են, իրար համբույրներ ղրկում, հայացքներ փոխանակում, երգեր ղրկում, բայց հեռվի՛ց, հեռվի՛ց: Իսկ սերը հեռվից մաքուր է, խորն է, սուրբ եւ երկնային:

Տարին մի անգամ միայն, երբ Քրիստոսի սիրով լցվում, ոգիանում է աշխարհը,– նրանք հանդիպում են իրար, իրար պատահում են, իրար գտնում, համբուրում ու բաժանվում՝ հեռո՛ւ, հեռո՛ւ, մեկը՝ արեւելք, մյուսը՝ արեւմուտք, եւ սպասում են լարված, հափշտակված, մինչեւ մյուս տարի…

Երանի՜ նրանց, ովքեր հեռվից են սիրում. նրանց սերը կտրում է անհուն տարածություն, եւ *նրանք գոնե տարին մի վայրկյան իրար գտնում են /…/*

Չար աստղերը չեն թողնում, որ նրանք իրար

հասնեն. չար աստղեր… Իսկ չար մարդիկ չեն թողնում երկրում սիրող սրտերը իրար հասնեն…» (*«Հիշատակարան»*, էջ 292) – «Այս բոլորը պատմում է աշըղը՝ աշուղ՝ սիրահարված կյանքի, երկնքի, երկրի գեղեցկության վրա, եւ երգեց ինձ այս ամենը բնության գրկում. նա ժողովրդի ծով-սրտի մեջ սուզվեց, հանեց այս մարգարիտները, որոնցով ես զարդարում եմ այս էջերը» (1902, նոյեմբեր, Բաքու) *(«Հիշատակարան», էջ 292: Աստղ-սրտերի մասին նախնական նշումներ՝ մտորումներ կան նաեւ 1898 թվի օգոստոսի գրառումներում («Հիշատակարան», էջ 260)):*

1902 թվի նոյեմբերի 9-ին Աբասթումանի առողջարանում բուժվող եւ «Անուշ» պոեմի մշակումով խիստ զբաղված Թումանյանը պատասխանում է բերված նամակներին. «Ժողովածվիս մասին ես հարցնում: Այդ խնդիրն էլ կա մեջտեղը: Իմ մի քանի բարեկամներն ուզում են հրատարակել, շտապեցնում են, պահանջում են, եւ ահա բույսը պիտի աշխատի *(Այս մասին Թումանյանը գրել է Փիլիպոս Վարդազարյանին 1902 թվի հոկտեմբերի 23-ին Աբասթումանից. «Երկրորդ գրքի տպագրության հարցով խնդրում եմ առայժմ ինձ չգբաղեցնեք: Առանց այն էլ վերջերս այնպես եմ, որ բժիշկը պատվիրում է, որքան հնար է, աշխատեմ հանգստանալ, իբրեւ բույս ապրեմ: Այնինչ ես չեմ կարողանում. մի երկու շաբաթվա անքնությունը եւ մի քանի ուրիշ դեպքեր տակն ու վրա արին ինձ կատարյալ, եւ տակավին մի տեսակ գազազած դրության, ալեկոծության մեջ եմ» – Հովհ. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 9, Եր., 1997, էջ 343)*: Բայց ժողովածվի հրատարակության հետ միասին բարձրացրել էին մի ուրիշ հարց՝ ինձ ապահովելու, գրել էին, ցրվելիք գրության ձեւն ուղարկել ինձ, հարցրել իմ համաձայնությունը. ես միանգամայն հրաժարվեցի: Ավելին ասեմ, այդ դեպքը, որ մեզնում ոմանց նախանձն է շարժել, այնքան խիստ ազդեց ինձ վրա, որ ինչքան էլ զսպեցի, այսուամենայնիվ, իմ նամակներն այնպես են դուրս եկել, որ նրանք վշտացել են: Սակայն ես էլ այն օրվանից եմ հանգստացել, ինչ որ համոզվել եմ, թե էլ չի լինելու այդ դիմումը: Ինչ լինելու է թող լինի, բայց մեզ վրա չծանրանա զանազան գյադաների բարերար ձեռքն ու մուննաթը: Ամեն մարդուց էլ չի կարելի լավություն ընդունել» *(Հովհ. Թումանյան. հ. 9, էջ 359–360)*:

Թումանյանին Բաքվից գրած նամակը եւ միաժամանակ հենց Բաքվում երրորդ անգամ գրի առած սիրահար աստղերի լեգենդը հուշում են, որ այս գողտրիկ լեգենդը Իսահակյանն է առաջարկել ավագ գրչեղբորը, որպես «Անուշ» պոեմի վերջերգ՝ Համբարձման գիշերվա հրաշալի վայրկյանի եւ սիրահար աստղերի համբույրի մասին: Մինչ այդ 1890 թվին ավարտված եւ 1892-ին Մոսկվայում «Բանաստեղծությունների» երկրորդ հատորում տպագրված «Անուշ» պոեմի 1-ին տարբերակը վերջանում է XXXVIII գլխի հետեւյալ քառյակով (Յովհաննէս Թումանեանց. Բանաստեղծութիւններ, Երկրորդ հատոր, Մոսկուա, 1892, էջ 39).

Վըշվըշում է գետը-վո՛ւշ, վո՛ւշ,
Եւ հորձանք է տալիս հորդ,
Եւ կանչում է, արի՜, Անո՛ւշ,
Արի տանեմ եարիդ մօտ:

1890 թ.

Նույն քառատողով է ավարտվում «Անուշի» նոր մշակված երկրորդ տարբերակի XXVIII գլուխը, որին Թումանյանը կցել է XXIX փոքրիկ գլուխը՝ Համբարձման գիշերվա վերջերգը, սիրահար աստղերի հանդիպման եւ համբույրի մասին, որ շարադրել է չափածո, հնգոտնյա տողերով՝ վարպետորեն ներկայացնելով լեգենդի ամբողջ հմայքը (Հովհ. Թումանյան. հ. 3, Եր., 1989, էջ 109).

Համբարձման գիշեր, էն դյութիչ գիշեր,
Կա հըրաշալի, երջանիկ վայրկյան.
Բացվում են ոսկի երկընքի դըռներ,
Ներքեւ պապանձում, լըռում ամեն բան,
Ու աստվածային անհաս խորհըրդով
Լըցվում բովանդակ Նըրա սուրբ գըքով:
Էն վեհ վայրկենին չըքնաղ գիշերի՝
Երկընքի անհո՛ւմ, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թըռած իրար են գալիս,
Գալի՛ս՝ կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհքից հեռո՛ւ, լազուր կամարում:

1983 թվականին, երբ լույս տեսավ իմ գիրքը Իսահակյանի էջմիածնի Գեւորգյան ճեմարանում եւ Գերմանիայում ուսանած տարիների մասին, ես Գրականության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Զրբաշյանին ցույց տվեցի իմ հավաքած փաստերը եւ Իսահակյանի նամակները Թումանյանի «Անուշ» պոեմի նկատմամբ ունեցած բացառիկ հետաքրքրության մասին եւ կարծիք հայտնեցի, որ Իսահակյանն է հուշել Թումանյանին «Անուշ» պոեմի վերջերգը՝ Համբարձման գիշերվա եւ սիրահար աստղերի հանդիպման մասին: Այդ ժամանակ Զրբաշյանը թեեւ շատ զարմացավ, բայց ծանոթանալով իմ հավաքած նյութերին՝ համոզվեց իմ կարծիքի հետ: Սակայն իմ գրքի լույս տեսնելուց վեց տարի հետո՝ 1989 թվին հրատարակված Թումանյանի «Երկերի լիակատար ժողովածուի» գլխավոր խմբագիր Էդ. Զրբաշյանը «Անուշ» պոեմի վերջերգի մասին ծանոթագրության մեջ հայտնում է. «Այդ վերջին տեսարանը՝ երկնքում աստղեր դարձած «անմուրազ մեռած սիրահարների» մասին, Թումանյանը ստեղծել է իր մորից լսած ավանդության հիման վրա» *(Հովհ. Թումանյան. հ. 3, էջ 516)*:

Սույն եզրակացության համար հիմք է ծառայել բանաստեղծի դուստր Նվարդ Թումանյանի (1892–1957) պատմածը՝ 1969 թվին Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ հրատարակած «Հուշեր եւ զրույցներ» գրքում. ««Անուշի» վերջին կտորը անմուրազ սիրահարների մասին («Համբարձման գիշեր, էն դյութիչ գիշեր, կա հըրաշալի, երջանիկ վայրկյան») կարծում էի ժողովրդական ավանդություններից է, մի այլաբանություն, մանավանդ որ «Ակնա երգերի» մեջ նման երկու ժողովրդական երգ կա: Հարցրի հայրիկին, պարզվեց, որ նանն է (իր մայրը) պատմել եւ շատ ուշ, պոեմը գրելուց հետո, երբ տպվելիս է եղել, գրել է ու կցել պոեմին: Ասում էր, որ նանը ավանդություններ ու զրույցներ շատ է պատմել» *(Նվարդ Թումանյան. Հուշեր եւ զրույցներ, Եր., 1969, էջ 222: Նույնը տես եւ 1987 թվի երկրորդ՝ լրացված, բարեփոխված հրատարակության մեջ, էջ 214)*:

Սակայն ուսումնասիրողները չեն նկատել, որ «նանն է պատմել հայրիկին…», եւ մնացած պարզաբանումները Նվարդը գրի է առել ոչ թե 1903 թվին՝ Թիֆլիսում նոր լույս տեսած «Անուշ» պոեմի երկրորդ տարբերակի առթիվ, երբ 11 տարեկան էր, այլ դրանից շուրջ 16 տարի հետո՝ 1919 թվի դեկտեմբերի 15-ին: Դրանից բացի, հաջորդ իսկ օրը՝ դեկտեմբերի 16-ին, ըստ Նվարդ Թումանյանի հուշերի, բանաստեղծն ընտանեկան երեկույթին նորից անդրադառնում է «Անուշի» վերջաբանին. «Երեկոյան հավաքված էինք հայրիկի սենյակում. մեր ընտանեկան հերթական գրական երեկոներից էր: Կարդաց մի հատված Նիզամու «Լեյլի եւ Մեջնունից» ու հետո սկսեց իր զրույցը. «Սա Արեւելքի «Ռոմեո եւ Ջուլիետն» է, անմուրազների սերը: Սկսվում է էն երգով, ինչ երգով ես իմ «Անուշն» եմ վերջացրել: Ափսոս Նիզամու իսկական թարգմանությունը չկա…»» *(Նվարդ Թումանյան. էջ 222)*:

Թվում է, թե հենց այդ ընտանեկան մտերմիկ զրույցի ժամանակ է, որ բանաստեղծը Նիզամու «Լեյլի եւ Մեջնուն» պոեմը հիշելու առիթով մի անգամ եւս պետք է հայտնած լիներ հավաքված-

ներին իր նանի պատմածը սիրահար աստղերի մասին, ինչն առանձին պատմած է եղել Նվարդին: Բացի այդ՝ մեծ բանաստեղծը չէր կարող չիմանալ, որ Նիզամու «Լեյլի եւ Մեջնուն» պոեմը արաբական լեգենդի մշակում է, եւ այն չէր կարող պարունակել սիրահար աստղերի Համբարձման գիշերվա հանդիպման եւ այլ մանրամասներ:

Այստեղ ստիպված եմ բերել իմ սեփական մեկնաբանումը – հավանորեն տարիների հեռվից դուստր Թումանյանն ինչ-որ բան այնպես չի փոխանցել մեծ բանաստեղծի ծննդյան 100-ամյակին նվիրված «Հուշեր եւ զրույցներ» գրքում եւ ըստ էության՝ անստույգ տեղեկություն է հաղորդել Նիզամու «Լեյլի եւ Մեջնուն» պոեմի սկզբում իբր եղած երկնակամարում սիրահար աստղերի հանդիպման մասին, որը չկա ո՛չ ռուսերեն թարգմանության մեջ եւ ո՛չ պարսկերեն բնագրում: Ըստ երեւույթին՝ բանաստեղծ Թումանյանը զրույցի ժամանակ ծանոթացրել է ընտանիքի անդամներին «Լեյլի եւ Մեջնուն» արեւելյան պոեմին, որի քրդերեն տարբերակը՝ «Լէյլի Մէջլում», եւ հայերեն թարգմանությունը հրատարակել է Ս. Հայկունին՝ 1903 թվին Թիֆլիսում՝ նոր լույս տեսած «Անուշ» պոեմի երկրորդ տարբերակի հետ միաժամանակ:

Թերեւս տեղեկացրել է նաեւ, որ այդ նույն սիրավեպը մշակել է պարսիկ բանաստեղծ Նիզամին: Բայց խնդիրն այն է, որ քրդերեն պատումի մեջ դժբախտ սիրահարները մեռնելուց հետո աստղ են դառնում («Էմինեան ազգագրական ժողովածու». Հայ-քրդական վէպեր, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի. Վաղարշապատ, 1903 (1904), հատոր Ե, Լէյլի Մէջլում, էջ 71–75).

Աղօթք Աստուծմէ խնդրեցին.
Աստուած ուշ եւ հոգին ետ բերեց,
Երեք օր, երեք գիշեր ոտքի վրայ կանգնեցան,
Այնպէս կը կարծէին որ այս բոպէին էր.
Աստուած երկուքն ալ արաւ աստղ, ձգեց երկինք.
Լէյլը հարաւային կողմ, իսկ Մէջլիւմ ի հիւսիս:

Մինչդեռ Նիզամու մշակած «Լեյլի եւ Մեջնուն» պոեմի պարսկերեն բնագրում որեւէ հիշատակություն չկա դժբախտ սիրահարների աստղ դառնալու մասին: Ահա թե ինչու Թումանյանն ափսոսում է, որ ձեռքի տակ չկա Նիզամու իսկական թարգմանությունը:

Շարունակությունը՝ էջ 8

Քաղցկեղի հոգեախտաբանությունը եւ բուժումը

«Քաղցկեղ» բառը մարդկանց հասցնում է ծանրագույն եւ ճգնաժամային հոգեվիճակի: Յուրաքանչյուր հիվանդ ինքն է ստեղծում իր հիվանդության պատկերը, հնարավոր ելքը՝ կապված սուբյեկտիվ ընկալումից, գիտելիքներից եւ դրանց հիման վրա արված եզրահանգումներից, որոնք շատ հաճախ տարբերվում են հիվանդության իրական ախտաբանությունից: Այս հարցը շատ սուր է դրված մեր հասարակության առջեւ, քանի որ մենք ապրում ենք տեխնոլոգիայի եւ ինֆորմացիայի դարաշրջանում, որտեղ յուրաքանչյուր ոք հնարավորություն ունի հաշված վայրկյանների ընթացքում ստանալու իր առողջական վիճակի մասին թյուր եւ աղավաղված տեղեկատվություն՝ առանց բժշկի հաստատման, ինչը բացասաբար է անդրադառնում առաջին հերթին հիվանդության ընթացքի եւ բուժման արդյունավետության վրա՝ շատ անգամ բերելով անցանկալի հետեւանքների: Այս ամենն ավելի ակնհայտ երեւում է ծանր եւ անբուժելի համարվող հիվանդությունների, հատկապես այսօր մեծ տարածում գտած քաղցկեղի եւ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ժամանակ: Հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ ուռուցքով հիվանդի անձը ենթարկվում է փոփոխությունների՝ կապված հիվանդության անբուժելիության, կրկնելիության, հնարավոր մետաստազների եւ նմանատիպ հարցերի հետ:

Չարորակ նորագոյացությունների առաջացմանը նպաստում են բազմաբնույթ հոգեբանական խնդիրներ՝ կյանքի ընթացքում վերապրած դրամատիկ պահեր, հետտրավմատիկ սթրեսային խանգարումների լուծման անկարողություն, ընկճախտ, անպաշտպանվածության զգացում եւ սեփական խնդիրների լուծման անկարողություն (С. Саймонтон, К. Саймонтон, Психотерапия рака, 2011): Ըստ հայտնի հոգեբան Գ. Յ. Այզենեկի՝ քաղցկեղով հիվանդանալու հակված են այն անձնավորությունները, որոնք դժվարանում են արտահայտել իրենց զգացմունքները (ալեքսիտիմիա) եւ չեն կարողանում հարմարվել սթրեսային իրավիճակներին: Այսպիսով՝ քաղցկեղային պրոցեսը տարաբնույթ գործոնների մի ամբողջություն է՝ սկսած գենետիկ նախատրամադրվածությունից, անձի տեսակից, վնասակար սովորություններից եւ կյանքի ընթացքում դժվարությունները հաղթահարելու ունակությունների բացակայությունից:

Բոլորս էլ տեղյակ ենք, որ այսօր քաղցկեղով հիվանդները ստանում են ամբողջ աշխարհում ընդունված եւ մշակված հակաքաղցկեղային բուժում՝ քիմիաթերապիա, ճառագայթային բուժում, իմունաթերապիա, սակայն որոշ հիվանդներ ապաքինվում են, իսկ մյուսները՝ անարդյունավետ բուժումից հետո մահանում: Այստեղ հարց է ծագում՝ ինչու միեւնույն ախտորոշում ունեցող հիվանդներից մեկը բուժվում է, մյուսը՝ ոչ: Այն հիվանդները, որոնք ունեն ուժեղ կամային հատկություններ, հիմնվելով բժշկի խոսքի եւ բուժման վրա, գնահատելով եւ սիրելով Աստծո տված կյանքը, առավել հեշտությամբ են հաղթահարում այդ փորձությունը: Այսինքն՝ ապրելու ձգտումն ու ցանկությունը, կյանքում ունեցած նպատակների առկայությունը (երեխաներ, սիրած գործ, հարազատներ, հավատ առ Աստված) նպաստում են օրգանիզմի պաշտպանողական մեխանիզմների ակտիվացմանը եւ իմունիտետի բարձրացմանը, որն էլ հաղթում է քաղցկեղային պրոցեսին: «Ես չեմ կարող մահանալ, քանի դեռ իմ երեխան չի ավարտել դպրոցը», «Առանց ինձ ամբողջ աշխատանքը կխաթարվի», «Ես չեմ կարող մահանալ, քանի դեռ չեմ լուծել աղջկաս պրոբլեմները»… ահա այսօրինակ մտածումները վկայում են, որ կյանքին կառչած լինելու ձգտումն առավել ուժեղ է, քան հիվանդությունը, եւ կարող է հաղթահարել ցանկացած փորձություն:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ կյանքից հեռանում են բուժում ստացած այն հիվանդները, որոնք հոգեբանորեն իրենց դուրս են մղել կյանքից՝ տարբեր պատճառներով.

– ապրելու ցանկության բացակայությունը,
– բժշկին եւ բուժման արդյունավետությանը չհավատալը,
– կյանքում նպատակի բացակայությունը,
– ընտանքում տիրող բարոյա-սոցիալ-հոգեբանական վիճակը,
– հավատի բացակայությունը:

Շարունակությունը՝ էջ 8

Վերջին ուսուցիչ չի լինում

Վարդգես Պետրոսյանը կյանքի մարդ էր, գիտեր պայքարի եւ առաջին շարքերում մնալու բոլոր ձեւերը: Նրա աչքի առաջ էր ոչ միայն գրական-մշակութային միջավայրը, այլեւ ամբողջ իրականությունը, հանրային հարաբերությունների կառուցվածքը, տեսնում էր վերի ու վարի կոշտ սահմանաբաժանը, բայց այս ամենով հանդերձ՝ ներսում՝ հոգու խորքում, պահպանել էր ռոմանտիկ մի բան, որ երեւում էր ինչպես առօրյայում՝ սեղանի շուրջ, ոգեշունչ պահերին երգելիս, խոսելիս, այնպես էլ, եւ ավելի՛ հիմնավոր, ավելի՛ ցայտուն՝ գրական ստեղծագործության մեջ:

Եթե ապրեր եւ ստեղծագործեր XIX դարում, անպայման ռոմանտիզմի հետեւորդ կհռչակեին, XX դարի սկզբին՝ նեոռոմանտիզմի, բայց ստեղծագործական այդ խառնվածքն ու տարերքը իր կյանքի ժամանակի մեջ էր եւ այլ բան չէր, քան անկատ, մեղմ ու թավշյա ընդդիմություն գաղափարական սխեմաներին, երբ դեպքից դեպք դեռ հիշում էին սոցիալիստական ռեալիզմի մասին, ինչը թեեւ պաշտոնապես կար, բայց վաղուց արդեն մնացել էր սոսկ ճառերի մեջ եւ գործում էր այնքանով, որքանով հիշեցվում էր որպես կուսակցական պարտադրանք:

Գրողների համագումարներից մեկի զեկուցման շարադրանքի կապակցությամբ դիմեց ինձ (իր նախագահության առաջին տարիներին աշխատում էի նաեւ ՀԳՄ-ում).

– Ինչ է այդ սոցիալիստական ռեալիզմը, ճառիս մեջ պարտավոր եմ անդրադառնալ:

Երկուսով նայեցինք իրար ու ծիծաղեցինք:

Մեկ ժամ անց ընդգծումներով իր սեղանին դրեցի «Գրականության տեսության» հայերեն եւ ռուսերեն մի քանի ձեռնարկներ: Համագումարի ճառի մեջ մի քանի դրույթներ իմիջիայլոց, սոսկ ասած լինելու համար, թվարկեց, ինչ-ինչ դատողություններով «իմաստավորեց» ու անցավ առաջ:

Այսինքն՝ երկրի գաղափարական պատվիրանները ձեւական էին անգամ այդ պատվիրանների վերահսկողությունն իրականացնողի՝ ԳՄ-ի նախագահի համար: Ահա այստեղ էր նրա պարտիզանական ազատությունը, որ տանում էր դեպի ռոմանտիզմ: Սա պաշտոնական պահանջներն արտաքուստ, ձեւականորեն պահպանող, բայց ներքուստ իր ստեղծագործական ազատությանը հավատարիմ՝ այդ տարիների գրողի կերպարն էր՝ շատ բնորոշ հատկապես վաթսունականների ողջ սերնդին: Ահա այս ազատությունն էր, որ նրան տանում էր դեպի ակնհայտ ռոմանտիզմ:

Այս շունչն առկա է նրա ամբողջ ստեղծագործության մեջ, նաեւ «Վերջին ուսուցիչը» վիպակում:

Երեւան, Մովսես Խորենացու անվան երկու հարյուր քաղաքային դպրոցներից մեկը, ավարտական՝ տասներորդ դասարանցիներ, ուսուցչական միջավայր, նախարարություն, շրջկոմ եւ այս իրականության մեջ դեռեւս հեքիաթներին հավատացող, իր աշակերտներին հեքիաթներով սնող մի ուսուցիչ՝ Վահան Մամյան, որը վերջին ուսուցիչ է դառնում ավարտական Xբ դասարանի համար: Ահա այս 50-ը չլրացած գրականության ուսուցիչը դառնում է հեղինակի իդեալի արտահայտիչը:

Ամեն ինչ ճիշտ այնպես է, ինչպես ռոմանտիզմի դասական երկերում: Բնական է՝ դպրոցի անունն այստեղ պայմանական է եւ հատկապես այդ անունն է ընտրված հնի ու նորի հակադրությունն ավելի ցայտուն դարձնելու համար, այսպիսի հակադրությունը ռոմանտիզմի գեղարվեստական միջոցներից է: Հակադրությամբ է կառուցված նաեւ գործողությունների շարքը, որի հիմքը դպրոցում տեղի ունեցած արտառոց մի դեպք է: Միջանկյալ նշենք, որ արտառոցն ու բացառիկը եւս ռոմանտիզմի գերակայություններից են:

Խորենացու անվան դպրոցում նաեւ Խորենացու ժամանակներն են. այնքանով, որքանով աշակերտները չեն սովորում, իսկ ուսուցիչները չեն կարողանում (նաեւ չեն ուզում) սովորեցնել:

Xբ դասարանի հինգ աշակերտ դասից հետո մնացել են դասասենյակում, «Բոնի էմ» խմբի նոր ձայնագրություններն են լսել (մագնիտաֆոնի դարաշրջան), եւ չքնաղ Մարի Մելիքյանը, որին շատերն են սիրահարված, ձայներիզի տրամադրող հնչյունների ներքո պարել է սեղանի վրա ու առանց դիմադրելու Արմեն Գարասեֆերյանի առաջարկին՝ հանվել:

Ոմանք նրան տեսել են Եվայի մերկությամբ, ոմանք՝ ծովափնյա, ինչ կա որ: Ոչինչ չէր լինի, եթե այդ պահին դուռը չբացվեր, եւ անակնկալ ներս չնայեր քիմիայի ուսուցիչ Սոնա Միքայելյանը: Տեսածը տեսած էր, որ նշանակում է հաջորդ պահին այդ մասին պետք է իմանային տնօրենը, հետո ուսուցչանոցը, հետո ամբողջ դպրոցը… Իմանալն էլ հո իմանալ չէր, ամեն մի շշուկին ուղեկցում էր միջանցքային բանահյուսությունը՝ ամեն տեսակի ծայրահեղություններով ու երեւակայական պատկերացումներով:

Կատարվածը տեղ հասցնելու տարբեր ճանապարհներ կան՝ նախ դպրոցի տնօրեն, մաթեմատիկոս Սահակ Վանունին պարտավոր էր զեկուցել վերադասին, գաղտնի պահել չէր կարող, որովհետեւ Սոնա Միքայելյանի զարմիկը՝ քեռու տղան, նախարարի տեղակալներից մեկն էր, եւ նա այսպես թե այնպես նրան տեղյակ կպահեր, եւ հետո դասարանում կար մեկը, որի հայրը սովորեցրել էր անստորագիր նամակներ գրել. հիմա նրա մութ գործի անցնելու ճիշտ ժամանակն էր:

Ահա այդ տարբեր ճանապարհներով լուրը հասնում է նաեւ նախարարություն ու շրջկոմ: Մինչդեռ 70-ին մոտեցող դպրոցի տնօրենին, արդեն որերորդ տարին է, խոստացել են վաստակավորի կոչում տալ: Այդ բացառիկ դեպքը հերթական անգամ քար պիտի գցեր նրա վաստակի գնահատման ճանապարհին:

Երկու ամիս է մնացել, որ տասներորդցիներն ավարտեն ու կյանքի ուղեգիր ստանան: Ահա հենց այս օրերին Xբ-ի դասղեկ Արամ Սանոյանը հրաժեշտ է տալիս կյանքին: Ասել էր. «Հենց մի օր դպրոց չգնամ, կմեռնեմ»: Այդպես էլ եղել էր: Ի դպրոց խենթացյալ նվիրյալներից մեկն էր: Արդեն իսկ հանգուցյալի փոխարեն դպրոց է մտնում գրականության մի նոր ուսուցիչ՝ Վահան Մամյանը, սա էլ իր հերթին է ասում. «Դպրոցն իմ կյանքն է», բայց սրա ասածն ասած էր, ասում է ու դառնում այդ դասարանի դասղեկ, եւ կարճ ժամանակ անց տեղի է ունենում հրաշքը:

Բայց ինչպե՞ս (նորից պետք է վերադառնանք ռոմանտիզմի դարաշրջան). ճիշտ այնպես, ինչպես Մուրացանի քույր Աննան միայնակ ու նվիրումով փրկեց մի ամբողջ գյուղ («Խորհրդավոր միանձնուհին»), ինչպես իշխան Գեւորգը միաբանեց նախարարական տները, հայ ժողովրդին ոտքի հանեց, երկրից քշեց արաբներին եւ վերականգնեց պետականությունը («Գեւորգ Մարզպետունի»): Շարունակելու դեպքում կարող ենք հիշել Ռաֆֆու հերոսներին, որ գործում են նրա թե՛ պարսկահայության կյանքը նկարագրող («Սալբի», «Հարեմ») եւ թե՛ ծրագրային ու պատմական վեպերում («Ջալալեդդին»,«Խենթը», «Կայծեր», «Դավիթ Բեկ», «Պարույր Հայկազն», «Սամվել»):

Հրաշքը պայմանավորված է մեկ նվիրված ու ինքնամոռաց անհատի գաղափարական ճիշտ գործունեությամբ:

Հիմա այստեղ այդ դերն ստանձնում է Վահան Մամյանը: Նա աշակերտների հետ նոր հարաբերություններ է ստեղծում, առաջ մղում մարդակային գործոնը, հոգեբանական ներգործության նոր ձեւեր է բանեցնում, պատմում է իր կյանքի առանձին դրվագներ, ինչից երեւում է, որ հիշողությունների շղթան Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների մեջ է, պաշտոնականը փոխարինում է անկեղծությամբ, այնպես է անում, որ իրեն հավատան, համարեն իրենցը, դասերն ավելի հետաքրքիր է անցկացնում, հիշում է, թե ինչպես ժամանակին իրենք կլանված կարդացել են Աբբա Պրեւոյի «Մանոն Լեսկո» վիպակը, իր աշակերտներին մղում է այդ քայլին: Այնպես է Տերյան անցնում, որ հուզմունքը պատում է աշակերտներին, եւ անգիր են անում իրենց սիրած գործերը: Աշակերտներին անհատապես ճանաչելու համար կարդում է նրանց նախկին շարադրությունները, հատկապես ազատ թեմաներով գրածները, անհատապես զրուցում է բոլորի հետ: Ոչ թե քչփորում է կատարված դեպքը եւ մեղավորներ որոնում, այլ փորձում է աննկատ մեղմել ինչպես աշակերտներին, այնպես եւ տնօրենին եւ ուսուցչությանը ետ պահել ծայրահեղ արարքներից եւ պատանիներին աստիճանաբար վերադարձնել բնականոն հուն:

Երեխաները նաեւ կաշկանդվածություններ ունեն. աշակերտուհիներից Լուսիկը սովորել է Տերյան, անգիրներ արել, բայց զգուշանում է հանդես գալուց, որովհետեւ վախենում է՝ իրեն ծաղրեն: Այսպես նաեւ չեն ուզում անկեղծանալ եւ պատսպարվում են պաշտպանական մի անզգացիկ-անջրանցիկ շերտի մեջ: Մամյանին հաջողվում է իր անկեղծությամբ վերացնել այդ շերտը:

Եվ հենց Լուսիկի հետ էլ տեղի է ունենում այս կարճ երկխոսությունը.

– Դուք մեր վերջին ուսուցիչն եք,– ասում է Լուսիկը:

– Վերջին ուսուցիչ չի լինում,– պատասխանում է Մամյանը:

Այս ընթացքում դպրոցը լարվածության մեջ է՝ վտանգավոր հեռախոսային զանգեր, մանկխորհրդի նիստեր, քննարկումներ, դեպքի շուրջ շարունակվող բանահյուսական զարգացումներ: Ուրվագծվում են կատարվածի հանդեպ իրենց տարբեր դիրքորոշումներն ու մեկնաբանություններն ունեցող ուսուցիչների կերպարներ: «Ոչ թե սերունդ է, այլ տասն անհայտով հավասարում»,– ասում է մաթեմատիկայի ուսուցիչ Մարտին Դանիելյանը: Մեկ ուրիշ անգամ. «Հինգերերդ աստիճանի հավասարում, այդպիսի անլուծելի հավասարումներ կան»: Եվ ասում է ոչ թե հոգսերը իրենից հեռացնելու համար, այլ սատարելու Մամյանին:

Ազատ թեմայով շարադրության փոխարեն տնօրենը Մամյանին խորհուրդ է տալիս թելադրություն տալ, «որպեսզի տեքստը մեր ձեռքին լինի». այսինքն՝ ոչ թե իրենք թելադրեն մեզ, այլ մենք՝ իրենց:

Մամյանն իր անելիքը գիտի. որպես նոր մարդ՝ չի միջամտում դպրոցում ծայր առած իրարանցմանը, լսում է գործընկերներին, բայց բանեցնում իր մեթոդները եւ աստիճանաբար դառնում է սիրելի եւ ընդունելի ոչ միայն աշակերտների, այլեւ գործընկերների համար:

Այս ընթացքում պարզում է, որ դասարանի 28 աշակերտից գրականությունն իրենց սիրելի առարկա են համարում 18-ը, որ նշանակում է, գրականությունից բացի, էլ ավելի պետք է ուժեղացնել մարդկային ներազդման գործոնը:

Վիպակի գործողությունները զարգանում են բոլոր ուղղություններով: Պարզվում է, որ Մամյանն ապրում է միայնակ, ամուսնացած չէ եւ անտարբեր չէ դարձյալ չամուսնացած, մոր հետ ապրող եւ արդեն երեսունհինգին մոտեցող նախկին գեղեցկուհի Սոնա Միքայելյանի հանդեպ:

Մամյանը սիրային նամակներ է գրում Սոնային, ինչպես XIX դարի դարձյալ ռոմանտիզմով տոգորված սիրային վեպերում, բայց ամաչում է հանձնել: Մեկ անգամ առիթ է լինում դպրոցի պատերից դուրս՝ սրճարանում, խորացնելու հարաբերությունները: Եվ ինչի՞ց պետք է խոսեին երկու ուսուցիչ, երբ վախենում էին «սեր» բառն ասելուց.

– Ձահելների հետ տարվող աշխատանքն ինձ հաճախ թվում է բալետ… սառույցի վրա: Մենք պարում ենք սառույցի վրա, իսկ սառույցից ներքեւ նրանց կյանքն է…– ասում է Սոնա Միքայելյանը:

– Մենք նրանց չափում ենք միայն մեր ապրածով, մեր ջահելության մոդելով,– շարունակում է Մամյանը:

Շարունակությունը՝ էջ 8

Քաղցկեղի հոգեախտաբանությունը եւ բուժումը

Սկիզբը՝ էջ 6

Ակնհայտ են դառնում հոգեթերապիայի առաջնահերթ կարեւորությունը եւ անհրաժեշտությունը քաղցկեղով հիվանդների բուժման գործընթացում՝ կարգավորելու համար նրանց հոգեբանական խնդիրները, կյանքի կոչելու եւ հաղթահարելու հիվանդությունը:

Հաճախ քաղցկեղով հիվանդների մտքում ծագում են մի շարք էկզիստենցիալ հարցեր՝ կապված Աստծո, կյանքի, մահվան հետ: Հետեւապես շատ կարեւոր է դառնում այդ հարցերի ճշգրիտ պատասխանների բացահայտումը, ինչը չէր անում դասական բժշկությունը, սակայն դա չափազանց կարեւոր է հիվանդի եւ նրա ապաքինման համար: Թեեւ վերջին տարիներին դասական բժշկությունն իր ուշադրությունն է սեւեռում նաեւ հոգեմարմնական փոխհարաբերություններին:

Չարորակ ուռուցքի հիմքում ընկած է ոչ միայն ուռուցքային բջիջների եւ մետաստազների արագ տարածումը, այլեւ՝ հոգու եւ մարմնի ամբողջականության մեջ տեղ գտած հոռետեսությունը, անզգայությունը: Հավատի տեսանկյունից Աստծո պատկերով ստեղծված մարդու համար ներդաշնակ գործունեություն հնարավոր է միայն բարության եւ ճշմարտության առկայությամբ, այնինչ հեռանալով Աստծուց եւ ապրելով սեփական օրենքներով՝ մարդն իրեն գցում է չարի ճիրանները: Համառությամբ եւ սրտի կարծրությամբ հոգում սերմանելով չարություն եւ զրկելով իրեն Աստծո պաշտպանությունից՝ մարդն ամբողջովին վերափոխում է իր հոգու եւ մարմնի աստվածակերպ էությունը, ինչն էլ պատճառ է դառնում այս հիվանդության: Այսինքն՝ հավատի տեսանկյունից չարորակ ուռուցքը չարության մարմնական արտացոլումն է: Ինչպես Նարեկացին է ասում, խոր եւ բնածին է մեր չարությունը:

Նման ախտորոշման պարագայում բուժման ելքը հավատն է՝ հիմնված ճշմարիտ՝ առաքելական դավանաբանության վրա՝ հոգին ազատելով գոռոզությունից, նախանձից, ատելությունից, ագահությունից եւ այլ մեղքերից, վերանայելով Աստծո տված կյանքը, հոգու անմահության գաղափարը եւ վերագտնելով Աստծուն: Հավատը մարդուն տալիս է խաղաղ, հանգիստ, ներդաշնակ կյանք՝ առանց մահվան վախի, հուսահատության, ինչը կարեւոր է ուռուցքով հիվանդների համար:

«Չարորակ ուռուցք» ախտորոշումը դատավճիռ չէ: Այն լուրջ հնարավորություն է վերահիմաստավորելու ապրած կյանքը եւ գնալու արմատական փոփոխությունների: Չարությունը տեղ է գտնում այն մարդու հոգում, որտեղ բացակայում է սերը: ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ, ՍԵՐ… սա է յուրաքանչյուր մարդու կյանքի հիմքը: Եթե ձեզ պատուհասել է այս ծանր հիվանդությունը, ուրեմն հավատացած եղեք, որ այս երրորդության համակարգում ինչ-որ բան ձեր կյանքում այնպես չէ: Մարմնական հետազոտություններին զուգընթաց գնացեք նաեւ հոգու ինքնազննման ճանապարհով, ինչը կթեթեւացնի ձեր հոգեվիճակը:

Շարունակելի

Արմեն ՆԵՐՍԻՍՅԱՆ
Բժշկական գիտ. թեկնածու,
հոգեթերապեւտ

Վերջին ուսուցիչ չի լինում

Սկիզբը՝ էջ 7

Աշակերտներից առանձնանում է Մարիին սիրահարված Արմեն Գարասեֆերյանը, որի ընտանիքն Ավստրալիա մեկնելու նախապատրաստական ճիգերի մեջ է: Դեպքի կապակցությամբ Արմենին հեռացնում են դպրոցից, ապա վերականգնում: Բայց նա ուրիշ հոգսեր ունի. հոր վճիռը իր վճիռը չէ: Ի վերջո գալիս է հայրենիքից հեռանալու պահը: Տղան դեմ է, բայց ենթարկվում է ծնողների կամքին:

Նրան ճանապարհ դնելու է եկել ամբողջ դասարանը, նաեւ չքնաղ Մարին, որը հայտնի դեպքից հետո դուրս էր եկել դպրոցից, աշխատում էր վաճառող եւ ուսումը շարունակում երեկոյան դպրոցում: Իսկ հայրը լքել էր ընտանիքը, եւ նա որոշել էր միայնակ մնացած մոր պատվին վրեժ լուծել բոլոր տղամարդկանցից:

Հուզիչ հրաժեշտից հետո Արմենը նստում է ինքնաթիռ, դուռը փակվում է, շարժասանդուղքը հեռանում: Բայց այստեղ էլ տեղի է ունենում հերթական հրաշքը. Նորից շարժասանդուղքը մոտենում է, ինքնաթիռի դուռը բացվում, եւ երեւում է Արմենը. նա չէր կարող ապրել ոչ առանց ընկերների, ոչ առանց Երեւանի:

Սա եւս ռոմանտիզմի հերթական քայլերից մեկն է:

Շեշտադրված է ժամանակին տարածված անստորագիր նամակների քստմնելի իրողությունը: Շրջկոմում աշխատող հայրերից մեկը՝ պաշտոնամոլ մի սրիկա, վերադաստիարակման նպատակով իր մոտ է կանչում Մամյանին, 45 րոպե սպասել տալիս եւ սպառնում նրան, իսկ տանը տղայի՝ Աշոտ Քանքանյանի ձեռագրով անստորագիր նամակներ է հասցեագրում տարբեր ուղղություններով: Տղայի արարքը բացահայտվում է դպրոցում, եւ համադասարանցիները նրան ինքնադատաստանով պատժում են ինչպես հարկն է:

Դպրոցական միջավայրից առանձնանում է քարտուղարուհի Սոֆի Լորեցյանի կամ, ինչպես ասում են նրան, Սոֆի Լորենի կերպարը: Միշտ հեռախոսը ձեռքին, ականջը՝ դռներին, գաղտնի լսում է բոլոր խոսակցությունները, գիտի իր հարգն ու պատիվը, պահվածքը, տնօրենին հաճոյանալու եւ քսմսվելու ձեւերը:

Քարտուղարուհու կերպարը Պետրոսյանի նախասիրություններից է, որովհետեւ աշխատանքային գործունեության ընթացքում նրա իսկ աշխատասենյակի դռանը շատ են եղել մի ձեռքին հայելի, մյուսին՝ հեռախոս, այդպիսի ջահել, սիրունիկ աղվեսներ:

Ռոմանտիզմին բնութագրական է նաեւ վիպակի ավարտը. հեղինակն ամեն կերպ ջանացել է դրական դրսեւորումներով ամփոփել երկու պաշտոնյաների՝ շրջկոմի քարտուղար Տիգրանյանի եւ լուսավորության նախարար Ռուբեն Սաֆարյանի կերպարները, մինչդեռ փաստ է, որ երկիրը նրանցն էր, եւ թվացյալ օրինականության շղարշի տակ իրենց թույլ էին տալիս ամեն տեսակի կամայականություններ:

Ռոմանտիկ է նաեւ վերջաբանը. տասներորդցիներն ավարտում են դպրոցը, իսկ նրանց դասղեկ Վահան Մամյանը յուրաքանչյուրին առանձին-առանձին նամակներ է հասցեագրում: Բնութագիր դպրոցը կտա, որ կկցեն գործերին, իսկ ինքը նամակներ է տալիս, որպեսզի հիշեն ու պահեն հոգիներում:

Վիպակի շարադրանքը պարզ է, առարկայական, հեղինակի ոճին բնորոշ այսպիսի դրսեւորումներով՝ «փափուկ տխրություն», «փորձեց կարմրել», «Սահակ Վանունին հուզված կամ բարկացած պահերին պարզապես նիհարում էր»: Հետաքրքրական է միայնակ սփյուռքահայի կերպարը, որը շաբաթը մեկ հայերեն թերթ էր ստանում, փակվում իր սենյակում ու բարձրաձայն կարդում: Մահից հետո այդ սենյակում մնում է նրա հայախոս ձայնը: Եվ այդ ձայնից ոչինչ չհասկացող տանտերը որոշում է սենյակն այլեւս վարձով չտալ:

Ավարտենք. Վարդգես Պետրոսյանի «Վերջին ուսուցիչը» վիպակն արծարծում է նոր սերնդի հոգեբանական ձեւավորման, կրթության ու դաստիարակության մշտանորոգ հարցեր եւ իր ժամանակի մեջ իր ձեւով գտնում լուծումներ: Այս հարցում ամեն մի ժամանակ ունի իր թելադրանքները:

Իսկ գաղափարագեղագիտական ամբողջ հյուսվածքն այլ բան չէ եւ այլ կերպ հնարավոր էլ չէ բնորոշել, քան խորհրդային ռոմանտիզմ:

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սիրահար աստղերի զրույցը

Սկիզբը՝ էջ 6

«Լեյլի եւ Մեջլում» արձակ պոեմի առթիվ՝ 1908 թվականի հուլիսի 25-ին, Ղազարապատում Ավ. Իսահակյանը կատարել է հետեւյալ գրառումը. «Լեյլի եւ Մեջլումի պոեման. Ս. Հայկունու քրդական վեպի մեջ կա. հավաքել եւ ուրիշ վարիանտներ. կազմել մի գեղեցիկ պոեմա, թեկուզ արձակ» (Ավ. Իսահակյան. հ.2, էջ 313): Հայկունու հրատարակած քրդերեն «Լէյլի Մէջլում» լեգենդն Իսահակյանն օգտագործել է «Լեյլի եւ Մեջլում» արձակ պոեմում՝ 1910 թվին Ղազարապատում, որը լույս է տեսել առաջին անգամ 1911 թվին «Հորիզոն» թերթի մարտի 24-ի № 63-ում՝ «Լեյլի եւ Մեջլում, հովիվ Մախսոյի պատմածը (Մի էջ «Ուստա Կարո» վեպից)» խորագրով: Դժվար չէ տեսնել, որ այս քրդական լեգենդը որոշակի տարբերություն ունի Իսահակյանի «Հիշատակարանում» եւ այլուր մատնանշված հայկական տարբերակից. նախ, հայկական լեգենդում հիշատակվում է Համբարձման գիշերը, որը քրիստոնեական հավատի հետ է կապված եւ հասկանալի պատճառով բացակայում է քրդական սիրավեպի մեջ: Բացի այդ՝ հայկական տարբերակում սիրահար աստղերը արեւելքից եւ արեւմուտքից են գալիս իրար հանդիպելու, որից հետո արեւելքից եկողը գնում է արեւմուտք, իսկ արեւմուտքից եկողը՝ արեւելք: Մինչդեռ քրդական լեգենդում Աստված Լեյլիի աստղը դնում է հարավում, իսկ Մեջլումինը՝ հյուսիսում, իսկ հանդիպման մասին որեւէ խոսք չկա: Սակայն հայկական լեգենդի օրինակով բանաստեղծը քրդական պոեմայում ավելացրել է նաեւ տարին մի անգամ հարավից եւ հյուսիսից իրար ընդառաջ եկող աստղերի հանդիպման եւ համբույրի տեսարանը *(Ավ. Իսահակյան. հ.2, 1974, էջ 177–178).*

Աստծու հրամանով երկուսն էլ աստղ դառան,
Անմուրազ Մեջլում ու երազ Լեյլին,
Երկինք թռան, աստղ դառան.
Մեկը շողաց հարավակողմ,
Մեկը՝ հյուսիսա:
Աստծու հրամանով տարին մեկ անգամ
Լեյլիի ու Մեջլումի աստղերը իրար կուգան,
Կարոտ-ծարավ սրտով կփաթաթվեն իրար,
Պաչ կուտան ու պաչ կառնեն:
Նորեն իրարուց կհեռանան,
Լեյլին Մեջլումի տեղը,
Մեջլում՝ Լեյլիի. –
Լեյլին՝ հարավակողմ,
Մեջլում՝ հյուսիսա…

Իսահակյանի քաղած հայկական զրույցներում անմուրազ սիրահարների աստղերը տիեզերքում դեպի իրար են գալիս Համբարձման գիշերը՝ արեւելքից եւ արեւմուտքից:

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝ **krishayas.wordpress.com**
Ստորագր. 4.11.2019 թ.
Տպաքանակը՝ 1175